

ՄԻՋԵԿԵՂԵՅԱԿԱՆ

ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ 2000-ԱՄԵԱԿԻ ՅՈՒԵԼԻՆԱԿԱՆ ԲԱՅՄԱՆ ԱՂՕԹԱԺՈՂՈՎ

Հինգշաբթի, 30 Ռեկտեմբերի 10.00-ի երեկոյեան, Գահիրէի Յահեր թաղամասի Բուլեժ Տը Լա Սալի ընդարձակ կաթողիկէ եկեղեցիին մէջ յատուկ հրաւերով, տեղի ունեցաւ Յիսուսի Քրիստոսի Ս. Ծննդեան 2000-ամեակի յոբելինական հանդիսութիւններուն առաջին շեռնարկը, ներկայութեամբ Նորին Ամենապատուութիւն Շնուտա Գ. Ռապտոյ Պատրիարքի եւ Ռապտի Կաթողիկէ Ստեֆանոս Բ. Պատրիարքի: Ներկա էին Անկլիքան եւ Աւետարանական Եկեղեցւոյ պետերը: Յոյն Ուղղափառ Պատրիարքի փոխանորդ Արքեպիսկոպոսը, Հայ Առաքելական Ուղղափառ, Ասորի Ուղղափառ, Յոյն Կաթողիկէ եւ այլ Եկեղեցիներու հոգեւոր պետերը, բազմաթիւ վարդապետներ եւ մայրապետներ:

Երեկոյեան ժամը 6-ին Ն. Ամեն. Պատրիարքները ժամանեցին: Կաթողիկէ համայնքի Արիներն ու Արեւնուշները թմբկահարութեամբ եւ փողերու նուագով դիմաւորեցին հիւրերը: Ուշագրաւ էր բազմահազար ժողովուրդի կարգ-կանոնը պահելու համար ոստիկաններու առատութիւնը:

Ղալրայ դասերու երգեցողութեամբ եւ թափօրով, տասնեակներով հոգեւորականներու խումբը յառաջացաւ դէպի Սուրբ Եկեղեցի, ուր ժողովուրդը ծափողջոյններով ընդունեց թափօրապետ Պատրիարքներն ու բարձրաստիճան հոգեւորականները:

Ն. Ամեն. Շնուտա Գ. Պատրիարք գոհաբանական աղօթքով բացուած յայտարարեց յոբելինական հաւաքը: Ապա Ն. Ամեն. Ստեֆանոս Բ. Պատրիարք հանդէս եկաւ բացման խօսքով եւ բացատրութիւններով: Ղալրայ դասերը մէջընդմէջ շարականներ երգեցին եւ ընթերցումներ կարդացուեցան մարգարեական Գիրքերէ եւ Նոր Կտակարանէն: Ի միջի այլոց Գերշ. Տ. Չաւեն Արքեպիսկոպոս Արաբերէն լեզուով կարդաց Կողոսայւոյ ուղղուած նամակի Ա գլուխի առաջին համարէն մինչեւ 20-րդ համարը:

Ս. Աւետարանի ընթերցումէն ետք, Ամեն. Տ. Շնուտա Գ. Պատրիարք հրաւիրուեցաւ քարոյ խօսելու: Յետոյ հոգեւորականներուն եւ ժողովուրդին մոմեր բաժնուեցան: Յոբելինական այս առաջին շեռնարկին եւ Էկումենական մթնոլորտին մէջ, հաւատալիքները ունեին հոգեւոր ուրախութեան ապրումներ:

Տէրունական աղօթքով փակուեցաւ հաւաքը, ժամը 8-ին, երբ Պատրիարքներ առաքելական օրհնութիւն բաշխեցին հաւատալիքներուն: